




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՀԱՅԱՍՏԱՆԻ



ԿԱՌՈՒՅՈՒՄ ԵՆՔ ՊՈԼՏԵԻՆԻԿԱԿԱՆԸ



371.4

Դ-75

Լ. ՇԱՆՇԵՐ

Արմ. 371.4
2-1941a 6-75

1 MAR 2018
ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԴԱՐԱՆ

ԿԱՌՈՒՑՈՒՄ ԵՆՔ
ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆՐ

2-1941a
704

Փոխտնօրյուններով քարտանկ
Գ. ԱԶՆԱԿՈՒՐՅԱՆ

Դ.Պ.Ե. Ե. ԼՆԴՐ.
Օ.Յ. 1932 Դ.
ԱՌՏ. № 244

№ 22526



1932

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԴԱՐԱՆ

15 JUL 2013


49.072



39659-63



КНИГОИЗДАТЕЛЬСТВО
„СЕВЕРНЫЙ КАВКАЗ“



1. ՄԵԼԲՈՆԻ ՄԽԱԼԸ

— Ոհո տես ե,—բացականչեց ընկերս, Ուստինյան Մելքոնը և ցույց տվեց՝

ՀԿԿ Կենտրոնական Կոմիտեյի վորոշումը արտա-
յան յեկ միջնակարգ դպրոցի մասին:

— Մեր մասին կուսակցութիւնը վորոշում ե հա-
նել—հանգիստավոր կերպով շարունակեց նա, մեր, դպ-
րոցականների և դպրոցի մասին: Ուրեմն, մենք ել սո-
ցիալիստական շինարարութեան մեջ արժեք ունենք և
անպետք, վար ընկած պտուտակներ չենք:

— Դե իհարկե անպետքներից չենք: Այդպիսի
բան միթե մեր մասին ասողներ կան:

— Չկան: Բայց դիտես, կկարգաս Դնեպրոշենի,
Մազնիտշենի, Քանաքեռշենի Զորագետի, Զագետի,
Բերգերիշենի (Դադաստան) մեր զանազան հսկա-
ների մասին և ընդհանրապես շինարարութեան մա-
սին ու,—մի տեսակ ցավ կզգաս: Յերբեմն կմտածես—
նչ յես դպրոցում որերդ մթնացնում: «A,B,C», «Պյու-
ժագորի թերեման», «Երկու թվերի խորանարդը»,
«մարմինը կորցնում ե իր քաշը»... զանչես տարան: Այն-
ոեղ շինարարութիւն, հարվածայիններ, հերոսներ, իսկ
ու—անգործութեան մատնված: Եթ, ուրախութեամբ
լանցնեյի գործարան, դադգյահի մոտ: Այ եղ հասկա-
ում եմ:

— Ե՛, Մելքոն, ինչպես տեսնում եմ, դու դեռ շատ
խմար ես:

— եդ ինչո՞ւ յեմ հիմար—վերավորվեց Մելքոնը:

— Մի՞թե կարծում ես, վոր դու, այ եղպես, վոնց վոր կաս, թերուս՝ զանազան դիտությունների հետ յերեսանց միայն ծանոթ, շատ ոգտակար կլինես մեր շինարարությանը: Մխավում ես, ընկեր ջան: Յերկիրը պահանջում է՝ «լավ պատրաստված գրագետ կաղերը»: Իսկ դրա համար պետք է սովորել, սովորել և սովորել, ինչպես ասել է Իլյիչը: Գիտությունը նույն դործիքն է,—առանց նրան, վոնց վոր առանց ձեռքերի: Իսկ մեզ տարեցտարի ավելի և ավելի գիտությամբ զինված մարդիկ են հարկավոր: Դե, այժմ վորոշիր, թե վերտեղ պետք է լինել՝ դպրոցում թե դադգյահի մոտ: Քեզանից շատ վատ տեխնիկ կամ ինժեներ դուրս կգա, յեթե «A, B, C»-են չլիմանաս: Ահա թե ինչու կուսակցությունը հագում է դպրոցի մասին: Այ, դու ավելի լավ կանես, յեթե կարդաս այդ վորոշումը:

2. ԻՆՉՊԵՍ ԵՅԻՆ ՅԱՐԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԸ ԸՆԴՊԱՐՏՈՒՄ ՄՏՅՆՈՒՄ

1887 թ. ցարական լուսավորության նախարարը ասում էր՝


— Ընդհանուր սլարտագիր ուսում: Այո, հարյուր տարուց հետո դուցե հնարավոր լինի:

Ցարական կառավարությունն ենքան ել չեր շտապում մտցնել ընդպարտուսը: Նրան ամենևին ձեռնու չեր, վորպեսզի Ռուսաստանի բանվորն ու գյուղացին գրագետ դառնան: Անգրագետ մարդուն շահագործելը նրա աշխատանքով հարստանալը ավելի հեշտ է, հեշտ է նրան վախեցնել աստծով ու թագավորով, զանազան հիմարություններով լցնել նրա գլուխը: Նրանք այդ դեպքում չեն ապստաբվի իրենց տերերի, ցարի դեմ:

Բայց թագավորի իշխանությանը վոչինչ չոգնեց: Յեկավ 1917 թ. փետրվարը, նրա հետևից—Հոկտեմբերը, և աշնան տերևների պես թափվեցին ու դեն շարտվեցին իրենց տաք տեղերից և ցարը և կալվածատերերը և կապիտալիստները:

Դպրոցի հետ բոլորովին այլ կերպ վարվեցին: Յերիտասարդ խորհրդային իշխանությունը սպիտակ բանդաների և ոտաբլերկրյա իմպերիալիստների դեմ մղվող կռիվների ամենածանր տարիներում չեր մոռացել դպրոցը, ինչով կարող եր, ոգնում եր նրան: Իսկ յերբ բաղաճաջիական պատերազմը վերջացավ, յերկիրը սկսեց վտաքի կանգնել, կառուցվել,—սկսեց աճել և դպրոցը:

Ցարեցտարի աշխատավորության նորանոր հարյուր հազարավոր յերեխաներ դպրոց ելին ուղարկվում:



1914 թ. հին դպրոցում սովորում ելին 7 միլիոն յերեխաներ: Իսկ 1931 թ. խորհրդային դպրոցում սովորում են արդեն 21 միլիոն դպրոցականներ:

21 միլիոն: Դպրոցականների այդպիսի հսկայական բանակ յերևակայել նույնիսկ դժվար է: Յեթե մեկիկ-մեկիկ ամեն մի վարկյանում մոտավոր անցնեն իրար հետեվից, այդ բանակը պիտի անցնեն ութը ամսվա ընթացքում գիշեր-ցերեկ:

Յեթե ամեն մի դպրոցական հինգական կոպեկ մտցնի, զրանից կգոյանա... մեկ միլիոն ուլբի...

Յեւ այդ 21 միլիոն աշակերտությունը սովորում է վոչ միայն ուսուցիչ լեզվով, ինչպես առաջ եր, այլ ամեն մեկը սովորում է իր մայրենի լեզվով: Խորհրդային Միութեան մեջ ավելի քան 70 լեզուներով դպրոցներ կան:

Հիմնականում մենք արդեն չորսամյա ընդհանուր, պարտադիր ուսումը մտցրել ենք. այդ նշանակում է, վոր 8-ից 12 տարեկան հասակի բոլոր յերեխաներն ընդգրկված են պարտադիր ուսումով: Իսկ այժմ մենք արդեն անցնում ենք յոթամյա ընդպարտուսի իրականացման (մինչև 15 տարեկան):

Ինչպես տեսնում եք, դրա համար խորհրդային իշխանութեանը հարյուր տարի պետք չեղավ:

Հապա ինչո՞ւն է այդ հաջողութեան գաղտնիքը:

Նրանում, վոր կուսակցությունը, կառավարությունը և ամբողջ բանվոր դասակարգը խիստ շահագրգռված են, վորպեսզի ամեն մի աշխատավոր լինի զրադետ:

Վոր՞հան գրագեհ լինի մեք յերկիրը, այնքան տեսազ կրնթանա սոցիալիզմի կառուցումը:

3. ԹՈՒԹԱՎԱՐ ԱՆԳԻՐ ԱՆԵԼՈՒՆ-ՀՐԱԺԱՐԱՎԱՆ

Բանը միայն նրանում չէ, վորպեսզի բոլոր յերեխաներն ընդգրկվեն դպրոցով: Պետք եր փոխել և դպրոցը:

Հիմնիվա յերեխաներից վոչ մեկը չի սովորել հին դպրոցում: Նրանք յերևակայել անգամ չեն կարող, թե ինչպես էին այն ժամանակ սովորեցնում:

Իսկ սովորեցնում էին այսպես:

Սկսվում է դասը: Ուսուցիչը խիստ է ու կոպիտ:

— Մանասյան, անցիր գրատախտակի մոտ:



Հին դպրոցը

Մանասյանը վախեցած կանգնում է ձիգ, առաջ է դալիս ու, աչքերը չռած, նայում է ուսուցչին:

— Պատասխանիր, վո՞ր թվականին է թագավորել Տիգրան մեծը, քանի՞ տարի յե թագավորել է լեբրե մեռել: Շուտ:

Մանասյանը քիթը տրորում է, կենարոնացած նա-
յում է առաստաղին ու... լուռ:

— Հը, ինչո՞ւ յես լռել: Զգիտես:

— Յես... պարոն Գեվորգյան...

— Ի՞նչ ես բառաչում կովի պես: Նստիր: Յերկու:
Հետևյալը: Սևումյան:

Սևումյանի հետ կրկնվում է նույն պատմությունը:

— Նստիր: Յերկու: Հետևյալը: Կոստանյան:

Կես դյուլիսից ավելի յերկուսներ շարելուց հետո
ուսուցիչը բարեսիրտ է դառնում և, անց ու դարձ ան-
լով լուռ դասաճանում, պատմում է հետևյալ դասը:

Միապաղաղ հոսում են բառերը, տարիները, անուն-
ները: Իսկ աշակերտներն այդ նվազի տակ կամաց
իրար են կամում, աննկատելի կերպով հաց ու պանիր
են խժռում, իրար ականջին ծիծաղելի պատմություն-
ներ փոփսում ու... անհամբեր դասի վերջանալուն են
սպասում:

Վերջացելով պատմվածքը, ուսուցիչը դասադրքում
յեզուսիցով նշան է անում ու ասում՝

— Ահա: Մյուս դասին պիտի սովորեք այստեղից-
այստեղ, իսկ ով չսովորի, վատ կլինի:

Մյուս ևս եյին սովորեցնում հին դպրոցում:

Գասերին տիրում էր ծեծի կարգապահություն:
Աշակերտները պարապում էին թուխակի պես անգիր
անելով ու կրկնելով իրենց դասերը: Յերեսանների
զլովխները լցնում էին ամեն տեսակ անպետք բանով:
Մեքողջ ուսուցումը կտրված էր կյանքից, սահմանա-
փակված դպրոցական չորս պատերով:

Դա բանավոր սխալասիկ դպրոցն էր:

Շատ վատ կլինեք, յեթե 20 միլիոն խորհրդային
աշակերտներն այդպիսի դպրոցներում սովորեյին: Պետք
էր ձեռնարկել ստեղծելու նոր խորհրդային դպրոց:

Մենք այբուբենի կրճատում կատարեցինք: Մնաս
բարև ասինք մի շարք տառերի, վորոնք, վորնց վոր ասում
են, պարապ տեղը հաց եյին ուտում, իսկ ոգուտ՝ հե՛չ:
Մենք դուրս քշեցինք կրոնը, լատիներենը, մի շարք
ուսումնական առարկաներից թափ տվինք մեծ քանակով
անպետք ու անոգուտ բաներ, փոխարենը մտցրինք ման-
կական ինքնավարություն, հասարակական գիտություն-
ներ, ճշգրիտ գիտություններ և մենք մեզ ասացինք՝
— Թող կորչի մեր խորհրդային դպրոցից թուխա-
կաբար սովորելը:

4. ԿԵՅՑԵ ՊՈԼԻՏԵՍՆԻԿԱԿԱՆԸ

Նշանակում է դա արդյոք, վոր հին, բանավոր դպ-
րոցը մեկեն տեղն ու տեղը հոգին ավանդեց ու նրա
տեղը աճեց մի ուրիշ, նոր դպրոց, վորը պետք է լինի
սոցիալիզմ կառուցող յերկրում:

Պարզվեց, վոր դործը բավականին բարդ է: Մեր
առաջ կանգնեցին դժվարին խնդիրներ:

Ի՞նչպես ամրացնել խորհրդային դպրոցը: Ինչպե՞ս
կապել նրան կյանքի հետ: Ինչպե՞ս կառուցել ամբողջ
դպրոցի աշխատանքն այնպես, վոր նա տա այնպիսի, կաղ-
րեր, ինչպիսին պահանջում է սոցիալիստական շինա-
րարությունը:

Յեվ անհամբեր ընդհուպ մոտեցանք պոլիտեխնիկա-
ման հարցին:

— Ի՞նչ է ուրեմն պոլիտեխնիզմը:

5. ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՄՈՏ ՄԱՐԴԻԿ ԵՆ ԱՇԽԱՏՈՒՄ

Կուսակցութեան և բանվոր դասակարգի հզոր ջանքերով մեր հեռամասաց հողագործական յերկիրը դարձավ առաջնակարգ, բարձր տեխնիկայով զինված ինդուստրիալ, արդյունաբերական յերկիր:

Ամեն ուր լրագրական հեռագիրները հաղորդում են կարճ, հարվածային տեղեկութիւններ՝

Հաշտութեամբ ավարտված է Գնեսպրոբենի բեռնե պահներ:

«Գիգան» խորհմանությունը ցորենի ցանքիս պլանը գերակատարել է:

Ստալինգրադի քաղաքային գործարանը արտադրել է 125 քաղաք:

Չորագետք արդեն ավարտված է:

Ավարտված է ԱՄՈ Մոսկովայի ավտոմոբիլային գործարանի վերակառուցումն յեվ լայնացումը:

Սկսված են հետախուզական աշխատանքներ հետախույժ Սիբիրում, Անգարենի վրա:

Աճում են ինդուստրիայի հարյուրավոր գիգանտներ. հարյուրավոր գործարաններ ու ֆաբրիկաներ և հազարից ավելի մեքենա-տրակտորային կայաններ արդեն հնգամյակի յերրորդ, վճռական տարում կառուցվեցին ու գործի անցան:

Մենք հաջողությամբ ենք մոտենում առաջին հնգամյակի վերջավորութեանը: Կուսակցութիւնը և իշխանութիւնը արդեն ցուցմունքներ տվին ձեռնարկելու յերկրորդ հնգամյա պլանի մշակմանը: Այդ հնգամյակի մեր աշխատանքների թափը ել ավելի լայնածավալ ու հսկայական է:

Մարդիկ կառուցում են մեքենաներ ու ձեռնարկութիւններ: Այդ ձեռնարկութիւններում, այդ մեքենաների

վրա նույնպէս մարդիկ են աշխատում: Մեքենան, առանց մարդու կույր և մեռած իր է, ինչպէս քարը, ինչպէս հողը:

Ծավալելով մեր շինարարութիւնը, մենք պետք է հոգանք մարդկանց մասին, վորոնք ֆաբրիկաներ, գործարաններ ու մեքենաներ են կառուցելու, այն մարդկանց մասին, վորոնք պիտի աշխատեն այդ ֆաբրիկաներում, այդ գործարաններում, այդ մեքենաների մոտ:

Յեվ այստեղ խիստ մեծ հողացողութիւն է պետք:

Խոմ առաջին հանդիպածին չես կանգնեցնի վորեք բարդ դազգյանի մոտ: Նախ հարկավոր է ծանոթացնել այդ մարդուն արտադրութեան հետ, բացատրել, թե ինչպիսի դազգյան է, ինչպէս պետք է վարվել—մի խոսքով, պետք է վորոշ գիտելիքներ տալ դրան, սովորեցնել:

Վորքան վոր շատ գործարաններ ու ֆաբրիկաներ կառուցենք, ենքան ավելի զրադետ, տեխնիկապէս սլատրաստված բանվորներ կ'աշխատեն: Վոշ միայն բանվորներ. մեզ պետք կ'լինեն տասնյակ հազարավոր տեխնիկներ, ինժեներներ ու ամենաբազմապիսի մասնագիտութիւնների և արհեստների մասնագետներ:

Թերթիր ուզածդ լրագիրը—նրա յերեսներից հայտարարութիւններ են, վոր ազադակում են.

— Պահանջվում են.

— Շատ պահանջվում են.

— Անհրաժեշտ են.

— Հրավիրվում են.


— Վարպետներ: Ինժեներներ: Կոնստրուկտորներ: Տեխնիկներ: Փականագործներ: Մեխանիկներ: Մոնսյորներ: Աստղագործներ: Կառուցողներ:

Որեցոր աճում են այդ պահանջները և դրանց վերջ չկա: Յեվ այդ բոլոր մարդկանց պատրաստութեան

հարցը կամ, ինչպես ասում են, կադրերի պրոբլեմը*), դառնում է վորպես կարեւորագույն խնդիր, վորը այսպես թե այնպես պետք է անպայման լուծել:

Ինչպես ենք սակայն լուծում այդ խնդիրը:

Մենք բաց ենք անում տասնյակ բարձրագույն տեխնիկական դպրոցներ, հարյուրավոր նոր գործաշփարոցներ, մեծ քանակությամբ զանազան մասնագի-



Դո՛ւրս, դո՛ւրս, դո՛ւրս...

տական տեխնիկական դասընթացներ, տեխնիկոսներ, քիմիկոսներ և այլն:

Կուսակցության կոչից հետո ամբողջ բանվոր դասակարգը պայքարում է տեխնիկային տիրելու համար:

*) Խնդիրը:

Կինոյի, ռադիոյի, մամուլի, գրքերի, թուղիկների, պլակատների, դասախոսությունների, զրույցների ու խմբակների միջոցով լայն աշխատավորական մասսաների մեջ ծավալվում է հսկայական տեխնիկական պրոպագանդա: Պետք է բարձրացնել ադգաբնակությունը ընդհանուր տեխնիկական կուլտուրան, սեր արթնացնել դեպի տեխնիկան, սրամտություն գլուտարարությունը, հարգանք և հոգասուր վերաբերմունք դեպի մեքենան:

Մեր մեջ ախր դեռ կան այնպիսի մարդիկ (հեռավոր, խուլ տեղերում), վորոնք իրենց կյանքում վոչ գրնացք են տեսել, վոչ ավտոմոբիլ, վոչ ել սավառնակ:

Դե, յերևակայեցեք, ինչպիսի հսկայական աշխատանք ունենք կատարելու:

Իսկ դպրոցը: Ի՞նչ տեղ է բռնելու նա կադրեր պատրաստելու հարցում:

Պարզ է, վոր դպրոցը մի վորևե «անպետք» բան չէ, ինչպես կարծում եր Ուստինյան Մելքոնը, ընդհանրապես, դպրոցն այդ գործում խիստ կարևոր, անհրաժեշտ պոտենցիալներից մեկն է:

Փոքր հասակից յերեխաների մեջ պետք է առաջ բերել սեր դեպի տեխնիկան, պետք է նրանց ընդհանուր հասկացողություն տալ արտադրության մասին: Այստեղ դպրոցը—պատվավոր, առաջնակարգ դեր ունի: Նա յե առաջինը, վոր մեր սոցիալիստական շինարարության համար պետք է պատրաստի ապագա կադրերը:

6. Ո՛Վ Ե ՈՒՐԵՄՆ ՃԻՇՏ

Լուրջ հարց է առաջ գալիս:

Տեխնիկայի ու արտադրության գիտելիքները չափազանց մեծ ու ընդարձակ են: Համաշխարհային գի-

տալան և տեխնիկական միտքը միշտ ել առաջ ե ընթանում,

Ի՞նչ սովորեցնել յերեխաներին:

Մարդկային գիտելիքների այդ հսկայական պահեստից առաջին հերթին ին՞չ պետք է տալ նրանց:

Մի փանիսն այսպես են ասում՝

— Մենք չգիտենք, թե ապագայում աշակերտն ինչպիսի մասնագիտություն կ'ընտրի իր համար: Յե՛վ սկսում են քաջքել նրան արտադրության մի ճյուղից մյուսը: Թող նա իմանա ամբողջ արտադրությունը, իսկ հետո նա ինքը կ'ընտրի իր համար այն, ինչ վոր կը հավանի:

— Դատարկ բաներ են այդ բոլորը, — ասում են ուրիշներ: Ձեր այդ աշակերտի գլխում մեր բոլոր արտադրություններից այնպիսի շիւղ-փիւղ կ'ստացվի, վոր նա ամբողջ կյանքում խելքը գլուխը չի հավաքի: Ախր նա այսպես թե այնպես մի վորևէ մասնագիտությանը վերջի վերջո աշխատելու յե: Թող ուրեմն հենց սկզբից պատրաստվի այդ վորոշ մասնագիտության համար:

Ո՞վ է ճիշտ դրանցից:

Վոչ առաջինները, վոչ ել յեկրորդները:

Առաջինները ճիշտ չեն այն պատճառով, վոր բոլոր արտադրությունների մանրակրկիտ ուսումնասիրությունից մանկան գլխում միայն շփոթ առաջ կգա:

Յեկրորդներն ել լուրջ սխալների մեջ են:

Ճիշտ է ասել միթե, վոր մարդ իր ամբողջ կյանքում սիւսյն մի նեղ մասնագիտությամբ պիտի զբաղվի: Վոչ, ճիշտ չէ:

Յերբ մարդ իր ամբողջ կյանքի ընթացքում միևնույն աշխատանքն է կատարում, ուրիշ վոչինչ չգիտե, այլևս վոչ մի բանով չի հետաքրքրվում. նա դրանից բխանում է, դառնում է սահմանափակ, նրա մտացած

բոլոր ընդունակությունները նվազում են կամ, ինչպես ասում են, ուժասպառ են լինում:

Մարդը մեքենայի ղեկավարը լինելու փոխարեն դառնում է նրա ճորտը, կենդանի հավելումը:

Սոցիալիստական հասարակությունը ձգտում է նրան, վորպեսզի իր ամեն մի անդամ՝ զարգացնի իր բոլոր ընդունակությունները, շնորհքը: Դրան հասնում ենք նրանով, յերբ մարդ հնարավորություն ունի ծանոթանալու և աշխատելու արտադրության զանազան ճյուղերում, մի տեսակ աշխատանքից անցնել մի ուրիշը, աստիճանաբար հարստացնելով իր գիտելիքները, զարգացնելով իր ընդունակությունները:

Տեխնիկայի բուռն զարգացումն ստիպել է հաճախ մարդկանց փոխել իրենց մասնագիտությունը կամ աշխատանքի տեսակը: Ամեն մի նոր գյուտ փոփոխում է կամ վոչնչացնում է աշխատանքի հին ձևերը, հին մասնագիտությունը և ստեղծում է աշխատանքի նոր ձև, նոր մասնագիտություն:

Որինակ, առաջ, յերբ նավահանգստից բեռը պետք է փոխադրեյին նավի տրյումը, հարյուրավոր բեռնակիրներ ելին աշխատում: Այժմ ամեն մի նավ ունի ծանրություններ բարձրացնելու և իջեցնելու մեքենա, վորը մեխանիկաբար նավահանգստից բարձրացնում է բեռը և տեղավորում տրյումում: Բեռնակիրներ արդեն համարյա թե պետք չեն և նրանք պետք է փոխեն իրենց արհեստը:

Բանվորը ստիպված է յուր ունակությունները, յուր մասնագիտությունը հարմարեցնել արտադրության փոփոխություններին, վորոնց ստեղծում է նոր գյուտը, ռացիոնալիզացիան:

Նրա համար, վորպեսզի բանվորը մի տեսակ աշխատանքից ավելի հեշտ անցնի մի ուրիշ տեսակ աշ-

խատանքի, արտադրութեան մասին նա պետք է ունենա ամբողջացած գաղափար, պէտք է իմանա ամեն մի մեխանիզմի հիմնական հասկութիւնները, պէտք է իմանա ճիգիկայի, մաքեմատիկայի, քիմիայի հիմքերը, վորոնց որեւեմների վրա յե կառուցվում արտադրութիւնը:

Միայն աշխատանքի տեսակը փոխելու համար չէ, վոր անհրաժեշտ է իմանալ այդ որեւեմները: Ունենալով այդ գիտութիւնները, ուզածդ մեքենայի մոտ բան-վորը իրեն կզգա վոչ թէ նրա հավելւած, այլ վորպես մեքենայի գիտակից ղեկավար:

Նա շատ հեշտ կերպով կարող է հասկանալ, թե ինչպիսի ֆիզիկական և քիմիական որեւեմների համա-ձայն կառուցված է մեխանիզմը, ինչու՞ն է կայանում նրա կոնստրուկցիան, նրա տարբերութիւնը մյուս մեքենաներից, նա շուտ կըմբռնի, թե մեքենայի վոր մասերն են վտանգավոր, ինչից է վախենում ինքը մեքենան, ինչպես խնամել նրան:

Այդ բոլորը արտադրութեան մեջ ահագին նշանակութիւն ունի:

Նախ քան յերեխաներին մասնագիտութիւն սովորեցնել դպրոցում, նրանցից ամեն մեկը ճիգիկայի, քիմիայի, մատեմատիկայի, աշխարհագրութեան, բնագիտութեան հիմնական գիտելիքները, ստանալու հետ միասին պետք է ծանոթ լինի արտադրութեան հիմքին կամ, ինչպես ասում են, պէտք է տեսնի տեսականում յեվ գործնականում (թեորիայում յեվ պրակտիկայում) բոլոր արտադրութիւնների ընդհանուր գիտական սկզբունքներին: Դրանում է պոլիտեխնիզմի հիմնական բովանդակութիւնը:

7. ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՍՎԶՐՈՒՆԲՆԵՐԸ

Այդ բոլորը խիստ ուշագրավ ու հետաքրքիր է,— կասի ընթերցողը: Բայց բացատրեք խնդրեմ, ինչ բան է այդ արտադրութեան ընդհանուր գիտական սկզբունքները:

Նրա համար, վորպեսզի հասկանանք այդ ամենը, գնանք մի վորեւէ ֆաբրիկա, դե, որինակի համար, տեկատիլը:

Յեկանք: Անցնում ենք բոլոր բաժինները, հար-ցնում բանվորներին՝

— Ինչ է արտադրում ձեր ֆաբրիկը:

— Չիթ, կտավ:

— Ինչից եք գործում չիթը, կտավը:

— Չիթը գործում ենք քամբակից, իսկ կտավը— կտավատից:

— Այդ բոլորը դուք գործում եք ինքնեդ, սեփա-կան ձեռքերով:


— Վոչ, ինչո՞ւ: Մենք ունենք հատուկ շուհակա-մանվածային և այլն մեքենաներ, դադգյահներ, վորոնք զգում, մանում ու գործում են:

— Իսկ ո՞վ է շարժում դադգյահները և մեքենա-ները:

— Դրա համար մենք ունենք այլ մեքենաներ, վորոնք կոչվում են շարժիչներ (двигатель): Նրանք շարժվում են ելեկտրականութեան, չոգու կամ վառելա-նյութի ուժով: Ստացված շարժումը նրանք տալիս են այն մեքենաներին, վորոնք գործում, մանում են:

— Հասկանալի յե: Իսկ դուք, ինչ եք անում դուք ինքներդ:

— Մենք աշխատում ենք մեքենայի վրա: Շարժ-ման մեջ ենք զցում նրանց, ղեկավարում ենք արագու-



թյունը, հետևում ենք, վորպեսզի, ամեն ինչ կանոնա-
վոր լինի:

Ուրեմն հիշեց կլինի, յեթե ասեմք, վոր չիք արսա-
դրելու համար պե՞տք է ունենալ՝

Բամբակ:

Զուլհակային, մանվածային յեվ ուրիշ մեքե-
նաներ ու դազգյաններ, վորոնք բամբակը չիք եմ
դարձնում:

Շարժիչներ, վորոնք շարժման մեջ են դնում այդ
մեքենաները:

Մարդիկ, վորոնք աշխատում են այդ մեքենաների
մոտ յեվ ղեկավարում են ճարքիկի ամբողջ աշխատանքը:

— Միանգամայն ճիշտ է: Իսկապես, ֆաբրիկային
դեռ ուրիշ բաներ ել է պետք, բայց այն, ինչ վոր
դուք թվեցիք, ամեն սզլխավորն է, հիմնականը:

Այցեկեցիք մետաղագործական գործարանը: Հար-
ցնում ենք:

— Ի՞նչ է արտադրում ձեր գործարանը:

— Բելսեր,*) յերկաթալար, մեխ:

— Ինչի՞ց եք պատրաստում բելսերը, յերկաթա-
լարը, մեխը:

— Թուջից, պողպատից:

— Դուք այդ բոլորը ձեր ձեռքերով եք պատրաս-
տում:

— Վուշ, ինչո՞ւ: Մենք ունենք մարտենի վառարան-
ներ, գրտնակող մեքենաներ: Մարտեններում մենք հալում
ենք թուջը, պողպատ ստանում, ձուլում ենք մեծ
ձողեր, հետո գրտնակում ենք և իվերջո դարձնում ենք
բելսեր, յերկաթալար, մեխ:

— Իսկ ո՞վ է շարժում այդ մեքենաները, տաքաց-
նում այդ վառարանները:

*) Յերկաթագիծ:

— Հատուկ շարժիչներ շարժում են մեքենան: Այդ
շարժիչներն աշխատում են ելեքտրականությամբ, նավ-
թով, քարածխով: Այդ նույն վառելանյութով ենք
ոգտվում մետաղը հալելու, նրա շիկացնելու համար:

— Բա դուք ինքներդ ի՞նչ եք անում:

— Մենք աշխատում ենք այդ մեքենաների մոտ,
հետևում ենք, վորպեսզի մետաղը վառարանում վորոշ
ժամանակից ավելի չեփվի, բաց ենք թողնում մետաղը
հատուկ կաղապարների մեջ, վորտեղ նա սառչում է,
հետևում ենք գրտնակող մեքենաների աշխատանքին,
այլ արտադրանք պատրաստող դազգյաններին, ղեկա-
վարում ենք նրանց արագությունը:

— Ուրեմն, ճիշտ կլինի, յեթե մենք ասենք, որի-
նակի համար, բելսեր պատրաստելու համար պետք է
ունենալ թուջ:

Մարտենի վառարաններ, գրտնակող յեվ ուրիշ
դազգյաններ: Շարժիչներ յեվ վառելիք:

Մարդիկ, վորոնք ղեկավարում են մեխանիզմների,
վառարանների, մեքենաների բոլոր աշխատանքը:

— Միանգամայն ճշմարիտ է: Ժիշտ է, գործարա-
նին անհրաժեշտ են դեռ ուրիշ շատ բաներ ևս, բայց
այն, ինչ վոր մենք այստեղ թվեցինք, — բելսերի արտա-
դրության գործում գլխավորն է, հիմնականը:

Մենք ուղեվորպեցինք կոնդիտերի*) ֆաբրիկան,
հետո ապակու գործարանը, վերջում կրկնակոշիկների
ֆաբրիկան: Ամեն տեղ մենք մեր հարցերն ելինք տա-
լիս և ամեն տեղ մեզ պատասխանում ելին նույնը,
ինչ վոր առաջին յերկու ձեռնարկություններում:

Այդ մեր մեջ վորոշ միտք հղացրեց: Մենք տուն
վերադարձանք, բաց արինք մեր գրաձները և սկսեցինք
միատեսակ հարցերի ձեռնարկություններից ստացած

*) Դազգրանոցի

պատասխանները կարգավորել: Հիմք ունենալով այդ բաղդատումը, մենք բոլոր արտադրութիւնների ընդհանուր կանոն դուրս բերինք (սկզբունք): Այդ սկզբունքը ասում է՝

Ամեն մի արդյունաբերական ձեռնարկութիւն վորեն մթերք, ապրանք արտադրելու համար պետք է ունենա՝

Հում նյութ (վորից պատրաստվում է այդ արտադրանքը):

Մեքենաներ (վորոնց միջոցով այդ հում նյութից արտադրանք է ստացվում):

Շարժիչներ յեւ վառելիք (վորոնք շարժում են այդ մեքենաները և անհրաժեշտ ջերմութիւն են լին):

Մարդիկ (վորոնք աշխատում են մեքենաների վրա, կազմակերպում ու ղեկավարում են ամբողջ արտադրութիւնը):

Այդպիսով ուրեմն մենք դուրս բերինք արտադրութեան ընդհանուր գիտական սկզբունքը:

Ա. ԾԱՆՈԹ ԸՆԾԱՆՈԹԻ ՄԵՋ ՓՆՏԵՑՆԵՔ

Այդ սկզբունքների նշանակութիւնը նրանում է կայանում, վոր նրանք ցույց են տալիս մեզ, թե ինչպիսի ընդհանրութիւն, միատեսակութիւն կա զանազան մեքենաներում, արտադրութիւններում, զանազան տեսակների աշխատանքներում:

Ուշադրութեամբ դիտելով ամենաբազմատեսակ դազգյահներ— ծակող, ռանգող, սրիչ և այլն, մենք կարող ենք գտնել այն ընդհանուրը, միատեսակը, վոր կա ամեն մի դազգյահում, գտնել ընդհանուր սկզբունքը, վորի հիման վրա կառուցված են այդ բոլոր բազմատեսակ դազգյահները:

Ուսումնասիրելով նույնպես, թե զանազան ֆարքիկներում և գործարաններում, ցեխերում ինչպես են բանվորները դասավորված, մենք կարող ենք ընդհանուր գիտական սկզբունք դուրս բերել, վորի հիման վրա խմբավորվում, դասավորվում, կազմակերպվում են արտադրութեան մեջ բանվորները:

Կամ թե, որինակ, մենք դիտենք նյութերի մշակման տամնյակ ամենատարբեր տեսակները: Սակայն, գննելով, թե ինչու մենք կայանում նրա մշակումը, ինչ ընդհանուր բան կա նրա զանազան տեսակների մեջ, մենք կարող ենք մշակման բոլոր այդ տեսակները բերել հիմնական չորս տեսակների:

Մեխանիկական մշակում:

Քիմիական մշակում:

Եներգիայի վերամշակում:


Կենդանի օրգանիզմի մշակում (կենդանաբուծութիւն, բուսաբուծութիւն):

Բայց այդ քիչ է: Չե՞ վոր այդ բոլոր մեքենաները, դազգյահները, նյութերը, շարժիչները բանվորները, իրարուց կտրված, անկախ դրութեան մեջ չեն գտնվում: Ընդհակառակը, արտադրութեան պրոցեսում նրանք շարունակ ընդհարվում են իրար հետ, ներգործում են իրար վրա, փոփոխում են իրար, փոխադարձաբար համակերպվում են:


Որինակի համար, վորպեսզի շոգեկառքը աշխատեցնելու համար քարածխի փոխարեն նավթ վառենք, պետք է փոխել նաև վառելու ձևը:

Չի կարելի սովորաթուղթը և յերկաթը միատեսակ մկրատով կտրել, ամեն մի նյութ իր հատուկ մկրատն է պահանջում:

«Լիվերս» ֆաբրիկում, վորը ժանյակ ե արտադրում բեռը տեղափոխելու համար, վերհանող մեքենա




Մետաղ




Դազգյահ

չի պահանջվում: «Սերպ և Մոլոտ» գործարանում, վորը բեյսեր, տեսակավոր յերկաթ ե արտադրում, այդ վերհանող մեքենաները շատ անհրաժեշտ են. առանց նրանց, վոնց վոր առանց ձեռքերի:

Մեքենան, վորի մոտ աշխատում ե բանվորը, վորոշ պրոֆեսիոնալ ունակութիւններ ե մշակում ու ամրա-



Շարժիչ



Տեկատիլ

ցնում նրանց մեջ, վորոնք անհրաժեշտ են այդ մեքենայի մոտ աշխատելու համար:

Մյուս կողմից, տարբեր կվալիֆիկացիայի (պատրաստակաճության) բանվորներ կարող են միևնույն մեքենայի վրա աշխատելով, աշխատանքի տարբեր արտադրողականության հասնել, արտադրանքի տարբեր վորակ տալ:

Այդ փոխարարներութիւնները նյութերի, մեքենաների, շարժիչների, մարդկանց մեջ լինում են խիստ տարբեր, բազմապիսի, բայց այստեղ ել մենք կարող ենք յերևան հանել արտադրության զանազան մասերի փոխադրեցության ընդհանուր, բնորոշ, տիպիկ տեսակները:

9. ԱՐՄԱՏԸ ՏԵՍ

Սակայն չպետք ե յերեք մոռանալ, վոր արտադրության ընդհանուր գիտական սկզբունքները իրենք իսկ կախում ունեն ֆիզիկայի, քիմիայի, մաթեմատիկայի ե բնագիտության վորոշ որենքներից, վորոնք ամբողջ տեխնիկայի հիմքն են կազմում ե առաջ մղում նրան:

Բացի դրանից, յերկրի հասարակակարգն, աշխարհագրութիւնը նույնպես ազդում են արտադրության թե բնութի ե թե կազմակերպության վրա:

Նայած նրան, թե վորտեղ են գտնվում քարածխի, հանածոյի, մետաղի պաշարները, ըստ այնմ ել կառուցում ենք մետաղադրոշմարեբրական գործարանները:

Մեծ, ջրառատ, կամ արագահոս գետերը լավ պայմաններ են ստեղծում հիդրոէլեկտրականների կառուցման համար (այդ կայաններն ոգտագործում են ջրերի հոսանքի ուժը):

Յերկրի ընդարձակ, լայնածավալ տարածությունները պահանջում են ողային հաղորդակցութեան հատուկ զարգացում և այլն:

Միայն մեր յերկրում, վորտեղ ձեռնարկութեանները, մեքենաները, հողը առանձին կապիտալիստներին չեն պատկանում, այլ պատկանում են աշխատավորներին, վորտեղ իշխանութիւնը բանվոր դասակարգի ձեռքին է, հնարավոր է նման հսկայական պլանային շինարարութիւն, հնարավոր է միլիոնավոր մասսաների ներգրավումը դեպի սոցիալիստական մրցում և հարվածայնութիւն:

Կապիտալիստական յերկրները այդպիսի արտադրութեան կազմակերպման և զարգացման չեն կարող տիրապետել վոչ թե նրա համար, վոր նրանք մեզանից ավելի աղքատ և թույլ են, այլ այն պատճառով, վոր նրանց մոտ այնպիսի կարգեր են, վորտեղ գործարանները, մեքենաները, հողը պատկանում են մասնավոր կապիտալիստներին, վորոնք միայն իրենց անձնական ոգուտն են փնտռում: Այնտեղ բանվորները իրենց հարվածային չեն հայտարարի և իրար սոցմրցման չեն հրավիրի լավագույն արտադրանքի համար:

Ինչպես տեսնում եք, այս բոլորը արտադրութեան դասավորման և բնույթի վրա իր ազդեցութիւնն են ունենում:

— Այդ ճշմարիտ է, — կասի ընթերցողը: Այ, դուք ասացիք, վոր արտադրութեան գիտական սկզբունքները պետք է ուսումնասիրել և տեսականում յեվ գործնականում, իսկ գործնականի մասին դուք վոչինչ ել չպատմեցիք:

Ինչո՞ւ յեք պահանջում մեր դպրոցից, վորպեսզի նա թեորիան և պրակտիկան (տեսականը և գործնականը) կապի իրար հետ:

10. ՏԵՍԱԿԱՆԸ ԱՌԱՆՑ ԳՈՐԾՆԱԿԱՆԻ, ԳՈՐԾՆԱԿԱՆԸ ԱՌԱՆՑ ՏԵՍԱԿԱՆԻ ՀԵՉ ԲԱՆ Ե

Կապիտալիստական հասարակարգի մեջ տեսականի և գործնականի մեջ ճեղքվածք կա:

Մենք լավ գիտենք, վոր ամեն մի գիտութիւն զարգանում է մարդկանց գործնական, աշխատանքային գործունեութիւնից: Ծանոթացե՛ք գիտութեան և տեխնիկայի պատմութեան հետ, և դուք կտեսնեք, թե ինչպես թափառական կյանքից նստակյացի անցնելը, առևտրի զարգացումը, նավագնացութիւնը, աշխատանքային գործունեութեան նոր տեսակներին անցնելը մարդկանց մեջ միտք է հղացրել զանազան գյուտեր կառուել, գիտական և տեխնիկական միտքը առաջ տանել Փորձառութեամբ հարստացած գիտութիւնը ցույց եր տալիս մարդկանց, թե ինչպես պետք է ոգտագործել բնութեան ուժերը, ցույց եր տալիս, թե ինչպես լավացնել նրանց աշխատանքային գործունեութիւնը:

Մարդկանց աշխատանքային գործունեութիւնը չուսումնասիրած գիտութիւնը կլիներ անոգուտ, նա աճելու, զարգանալու հնարավորութիւն չեր ունենա: Մյուս կողմից մարդկանց աշխատանքային գործունեութիւնը առանց գիտութեան կլիներ կույր, անոգնական, նա չեր բարելավվի և բնութեան ուժերը չեր կարողանա իրեն յենթարկել:

Իսկ ոգնելով իրար, գիտությունն ու աշխատանքը միասին հսկայական ուժ են ներկայացնում, վորը առաջ է տանում մարդկային հասարակության ամբողջ զարգացումը:

Ահա թե ինչու յենք մենք ձգտում, վորպեսզի ամեն մարդ կապակցի իր մեջ և տեսական գիտութիւնները և գործնական ուսակութիւնները:

Հապա ինչո՞ւ կապիտալիստական յերկրներում տեսականի և գործնականի մեջ գոյութիւն ունի այդպիսի ճեղքվածք:

Նրա համար, վոր կապիտալիստները, վորոնք նախ և առաջ մտածում են վոչ թե ամբողջ հասարակութեան շահի մասին, այլ միայն իրենց գրպանների, ամենևին չեն շահագրգռված նրանով, վորպեսզի աշխատավորութեան լայն մասսաները զինված լինեն գիտութեան ներքով:

Կապիտալիստներին յերբեք ցանկալի չէ, վորպեսզի բանվորները պարզ կերպով իմանային և հասկանային, թե ինչ է կատարվում իրենց շուրջը:

— Նրանք թող միայն աշխատել իմանան,—ասում են կապիտալիստները, իսկ գիտութեանը մենք կհանձնարարենք մեր հավատարիմ մարդկանց: Գիտութեանը — չափազանց անեղ զենք է, վորպիսին տալ բանվորների ձեռքը վտանգավոր է:

Մեր յերկրում, վորտեղ տերը բանվոր դասակարգն է, բոլորովին այլ բան է:

Մենք սոցիալիզմ ենք կառուցում, իսկ սոցիալիզմը պահանջում է աշխատանքի և գիտութեան մեջ յեղած ճեղքվածքի, տեսականի և գործնականի մեջ յեղած ճեղքվածքի վոչնչացումը:

Միջոցներից մեկը, վորը ոգնում է այդ ճեղքվածքի վոչնչացումը, պոլիտեխնիկական դպրոցն է, վորը կապակցում է տեսական ուսուցումը աշխատանքի հասարակա-աշխատողական աշխատանքի հետ:

11. ՎՈՉ ՆԵՂ ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ, ԱՅԼ ՍՈՅԻԱԼԻԶՄԻ ԲԱԶՄԱԿՈՂՄԱՆԻ ԶԱՐԳԱՅԱԾ ԿԱՌՈՒՅՈՂՆԵՐ:

Ճիշտ է, տեսականն ու գործնականը կարելի չէ տարբեր կերպով կապել:

Որինակ, վերցնենք ամերիկական դպրոցը: Առաջին հայացքից նրան կարելի չէ պոլիտեխնիկական անվանել: Այնտեղ ել տեսականի և գործնականի մեջ կապ կա: Բայց ի՞նչ կապ է այդ: Դա այնպիսի կապ է, վորից տեսականի տունն է քանդվում:

Որինակ, Ամերիկայի յերեխաները անասնաբուծութեան են ուսումնասիրում: Ընդհանուր տեսական գիտելիքներ նրանք շատ քիչ են ստանում, մի աննշան մասնիկը միայն, վորը անհրաժեշտ է, վորպեսզի անասնաբուծական տնտեսութեան կառուցվածքը բացատրվի:


Բայց ախր ինքը բազմացումը, ընտրութեանը, կենդանիների տեսակների լավացումը, հենվում են կենդանաբանութեան որենքների վրա, Դարվինի կենդանիների տեսակների ծագման թեորիայի վրա:

Մակայն այդ ընդհանուր գիտական հասկացողութեանը և գիտելիքներից յերեխաներին համարյա թե վոչինչ չեն տալիս: Թեորիայից նրանք ստանում են փոքրիկ կտորներ, վորոնք բավական են միայն նրա համար, վորպեսզի բացատրեն այն, ինչ վոր աչքի առաջն է, «քթի տակը»:

Այդպիսի դաստիարակութեանը առաջ է բերում գործարարներ, վորոնք լավ գիտեն միայն իրենց «գործը». բացի դրանից, նրանք շատ քիչ բան գիտեն, չունեն լայն աշխարհայացք և քննադատ ապարեդներում նրանք սոսկ քաղքենիներ են:


Մենք մեր առաջ խնդիր ենք դնում դաստիարակել վոչ թե ամերիկական գործարարներ, այլ սոցիալիստ-

կան հասարակության բազմակողմանի զարգացած կառուցողներ: Մենք չենք հրաժարվում հիմնությունների, վորեն գործնական խնդիր արագ և լավ լուծելու ունակությունից: Բայց այդ ել դեռ բավական չէ: Պետք է ունենալ նաև լայն պոլիտեխնիկական հորիզոն, խորը ըմբռնել գիտությունների հիմքերը, հասկանալ այն բոլոր պրոցեսները, վորոնք կատարվում են բնություն, արտադրության, հասարակության մեջ:



Ճիշտ է արդյոք ընդունել վոր...

Մեզ մոտ թեորիան վորքերիկ կտորներով չի կայգվում պրակտիկային, այլ ընդհակառակը, ամբողջ պրակտիկան (արտադրական ուսուցումը ցեխերում, արհեստանոցներում, հասարակական-ոգտակար աշխատանքը) յենթակա յե դպրոցի հիմնական խնդրին՝ ՏԱՂ զիսությունների վարոս սիսեմ, գիտությունների հիմքեր՝ Ֆիզիկայի, Բիմիայի, մաթեմատիկայի, աշխարհագրության, հասարակագիտության, մայրենի լեզվի:



Մարդը իր ամբողջ կյանքում պետք է աշխատի միայն մի մասնագիտությունում: Վո՛չ, դա ճիշտ չէ:

12. ՆՇԱՆԱԿԱՆՑ ԹՎԱԿԱՆ

1930 թվի ոգոստոսի 10-ը պոլիտեխնիկական դպրոցի կառուցման պատմության մեջ նշանակալից թվական է: Այդ որը Մոսկվայում բացվեց առաջին պոլիտեխնիկական համադոմարը:

Պոլիտեխնիկական համադոմարը սկիզբ դրեց դպրոցի պոլիտեխնիկական վերակառուցման մասսայական շարժմանը:

ԽՍՀՄ-ի ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը վորոշում հրատարակեց, վորպեսզի բոլոր դպրոցները կցված լինեն Փաբրիկներին, գործարաններին, ելեկտրոկայաններին, խորհրտեսություններին, կոլտնտեսություններին, մեքենա-տրակտորական կայաններին:

Նման բան հնարավոր է վորեն կապիտալիստական յերկրում: Տեղերից, դպրոցներից, կարծես ռազմաճակատից ստացված տեղեկագրեր, տեղեկություններ են ստացվում:

Կապվեցին սեսադագործական գործարանի հետ:

Կցվեցին մանածագործարանին:

Պայմանագիր կնեցին ՄՏԿ-ի, կոյսեսեսության հետ:

Կցվեցին ելեկտրոին, ցեսեսի գործարանին, սպարանին:

Ոգնության Բաեցին խորհեսեսությունը:

Ճշմարիտ է, դժվարություններ յեղան: Տնտեսավարներից շատերը պոլիտեխնիկացիայի եյությունը չեյին հասկանում, հակառակում եյին դպրոցները իրենց ձեռնարկություններին կցելուն: Սխալ կցումներ ել յեղան: Որինակ, Բագվում դպրոցներից մեկը կցել եյին—ձեռ կար ծիքով ինչին—բաղնիքին: Պոլիտեխնիկականացեք, ինչրեմ մոջակայի ու թասերի վրա:

Չնայած այդպիսի դժվարություններին, դպրոցներից շատ-շատերը կապվում էին ձեռնարկությունների հետ, պայմանագրեր էին կնքում, կազմակերպում էին արտադրական պրակտիկա, ծավալում էին հասարակական-քաղաքական աշխատանքը:

Այդ կցումները մեր դպրոցների պոլիտեխնիզացման համար հսկայական նշանակություն ունեն:

Մենք խոսեցինք պոլիտեխնիզմի մասին, արտադրության գիտական սկզբունքների ուսումնասիրության մասին տեսականում և գործնականում, տեսական ուսուցման կապի մասին արտադրողական աշխատանքի հետ: Բայց առանց կապի արտադրության հետ, վորո՞ւնք ձեռնարկության հետ, առանց ձեռնարկության կողմից դպրոցին ռժանդակելու, պոլիտեխնիզմի մասին այդ բոլոր խոսակցությունները կմնան միայն լոկ խոսքեր:

Կապվելով վորոշ ձեռնարկության հետ, դպրոցը պարզ, հասկանալի կերպով կարող է ուսումնասիրել արտադրության գիտական սկզբունքները, ստուգել, թե ինչպես ֆիզիկայի, քիմիայի, բնագիտության վորոշ որենքները արտացոլվում են մեխանիզմների կոնստրուկցիայում, ձեռնարկության արտադրական պրոցեսում:

Ձեռնարկության ոգնությունը դպրոցը կազմակերպում է արհեստանոցներ և աշխատանքային սենյակներ, վորտեղ, սերտ զուգակցելով ձեռնարկության ցեխերի արտադրական ուսուցման հետ, կազմակերպվում է աշակերտների արտադրական ուսուցումը:

Մոտավորապես 1931 թվի կեսին քաղաքների և գյուղերի հսկայական քանակությամբ դպրոցները արդեն կցված էին արտադրության:

Այդպիսով դպրոցը աստիճանաբար դուրս էր գալիս փակ, չորս պատերից մեկում էր արտադրական

աշխատանք, հասարակական աշխատանք. սոցիալիստական շինարարության մասնակից էր դառնում:

Սակայն նվաճումների հետ զուգընթաց պոլիտեխնիզացիայի գործում տեղի ունեցան գլխիկ խեղաթյուրումներ, սխալներ, վորոնք քաջ էին տալիս դպրոցը սխալ ուղիով:

Ինչո՞ւն էին կայանում այդ սխալները և խեղաթյուրումները:

13. ՈՒՍՈՒՄԻՑ ՁԵՌԲ ԵՅԻՆ ՔԱՇԵԼ

Սոցիալիզմը բարձր տեխնիկա չէ պահանջում:

Բարձր տեխնիկան պահանջում է զրազետ, զարգացած, գիտության հիմունքները լավ յուրացրած մարդիկ:

Պոլիտեխնիկական դպրոցի խնդիրն է տալ յերեխաներին այդ գիտությունները պատրաստել զրազետ, ֆարգործուհիների, տեխնիկոսների, բարձրագույն դպրոցների համար կոմունիստներն դաստիարակված կադրեր:

Պոլիտեխնիկական դպրոցի այդ հիմնական ուսումնա-դաստիարակչական խնդիրն պետք է յենթադրվեն աշակերտության յեվ արտադրական պրակտիկան յեվ հասարակական աշխատանքը:

Խեղաթյուրման, սխալների արմատը կայանում էր նրանում, վոր շատ ընկերներ դպրոցի այդ հիմնական խնդրի մասին մոռացել էին: Դրա փոխարեն դպրոցի վորպես գլխավոր խնդիր, նրանք առաջադրել էին մասնակցել արտադրական և հասարակական ոգտակար աշխատանքներում:

Բայց այստեղ ի՞նչ խեղաթյուրում, ի՞նչ սխալ կա, — կհարցնի ընթերցողը:

— Միթե դպրոցը մասնակցելու չե արտադրական աշխատանքներին և հասարակական գործերին:

Այո, նա անպայման պետք է մասնակցի: Բայց այդ մասնակցութիւնը պետք է յենթակա լինի յեւ ռգնի դպրոցի գլխավոր խնդրին՝ պատրաստել գրագէտ, կոմունիստներն դաստիարակված կադրեր:

Այո, ընկերներից շատերը մոռացել էին այդ: Նրանք մոռացել էին Լենինի ցուցմունքները այն մասին, վոր «կոմունիստ կարելի չէ դառնալ միայն այն դեպքում, յերբ դու եռ միտք կհարստացնես մարդկության սեղծած բոլոր հարստութիւններով»:

Արտադրական պրակտիկան և հասարակական աշխատանքը փոխանակ այնպես դնելու, վոր նրանք իսկապես ոգնեն գիտելիքների ավելի խորը յուրացմանը, այդ ընկերները անուշադրութեան էին մատնել դպրոցական ուսուցումը և ամբողջ ուշադրութիւնը կենտրոնացրել էին աշակերտութեան արտադրական պրակտիկայի և հասարակական աշխատանքի ծավալման վրա: Առանձնապես այդ յերևան յեկավ ամառային դպրոցի անցկացման ժամանակ:

Յերեխաներից շատերն աշխատում էին դաշտերում, բանջարանոցներում, հսկայական հասարակական աշխատանք էին կատարում, բայց վատ էին սովորում: Գլուղատնտեսութիւնը չողտադործեցին խորացնելու, ամբողջացնելու գիտելիքները ֆիզիկայից, քիմիայից, բնագիտութիւնից: ամառվա ընթացքում չեն աշխատել թույլ առարկաները կրկնել, վերապատրաստվել:

Յերեխաներից շատերը վոչ միայն նոր գիտելիքներ ձեռք չբերին, այլ նույնիսկ մոռացան մասամբ և այն, ինչ վոր գիտեային:

Միանգամայն պարզ է, վոր դա վոչ մի բանի նման չէ, այդպես շարունակվել չի կարող:

14. ՍԵՐԵԴԻՆՍՐՈՒԴԻ ՎՈՉ ԲԱՐՈՎ ԱՐՏԵԼԸ

Թե ինչպիսի հիմարութիւններ են կատարել մի քանի դպրոցները այդ թեքումների շնորհիվ, փայլուն որինակ է ցույց տալիս Սերեդինսկուդի կոլեքիտ դպրոցը:

Յերբ ամառային աշխատանքի անցնելու ժամանակը յեկավ, Սերեդինսկուդի կոլեքիտի դպրոցի ղեկավարները արձակեցին իրենց դպրոցը և կազմակերպեցին... մանկական բանվորական արտել:

Բանկոմիտե ընտրեցին նախագահով ու յերեք տեղակալներով և քարտուղար յերեք տեղակալներով (ամբողջ վեց տեղակալ): Սարքեցին մեծ գրասենյակ զանազան դրքերով, ցուցակներով, բլանկներով և այլն: Ուսումնական խմբերը խառնեցին և նրանցից նոր աշխատանքային բրիգադներ և ողակներ կազմակերպեցին:


Այդ «արտելի» ամբողջ ուշադրութիւնը կենտրոնացած էր դաշտերում և բանջարանոցներում յերեխաների կատարելիք աշխատանքը լավ կազմակերպելու և ոգտադործելու վրա:

Գիտելիքները յուրացնելու վրա ուշադրութիւն չէր դարձվում:

Յեւ իսկապես, յերեխաները հսկայական աշխատանք կատարեցին, տանյակ հեկտար ցանքս քաղհանեցին, շատ ծառեր տնկեցին, գտեցին ու ախտահանեցին սերմացուն և այլն:

Փոխարենը՝ բոլոր մյուս ցուցանիշներում համատարած ճեղքվածքներ: Նոր ուսումնական գիտելիքներ չէին ստանում: Թույլերի հետ վոչ մի աշխատանք չէր տարվում: Կուլտուրական աշխատանքը բանի նման չէ: Մարզանքը նույնպես: Հանգիստը վերին աստիճանի թույլ էր կազմակերպված:

Ահա ձեզ «մանկական բանվորական արտի» արդյունքները:



Բազմի դպրոցներից մեկին կցել էին, ինչ էլ կարծում... բաղնիքին...
Պոլիտեխնիկացիներ թասերի ու մաշականների միջոցով:

Հենինգբրադի մանկական և անչափահասների առողջապահությանը խնամող ինստիտուտի պրոֆեսոր Դուրնովն

Հենինգբրադի 48 դպրոցների հետազոտությունից հետաքրքիր որինակներ է բերում:

Պարզվեց, վոր հասարակական աշխատանքներին լծված ակտիվիստ աշակերտը համարյա թե յերկու անգամ ավելի յե ծանրաբեռնված, քան շարքային աշակերտը: Այդպիսի ակտիվիստը զբաղված է ամեն տեսակ աշխատանքով—ընտանեկան, ուսումնական, հասարակական—որվա մեջ սասը ժամից ավելի:

Անշուշտ, այդպիսի բեռնավորումը սաստիկ ազդում է այդ ակտիվիստի ուսման և առողջության վրա և նրան պետք է անմիջապես թեթևացնել: Իսկ նման յերեույթներ շատ դպրոցներում կարելի յե դիտել:

15. ՄԻ ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ՀՅՈՒՐԻ ՄԱՍԻՆ

«Նախագծային մեթոդի» «метод проектов») չմրտածված և լայն չափերով կիրառումը մեծ ֆլաս բերեց դպրոցին:

Այդ ի՞նչ «նախագծային մեթոդ» է:

Նախագծային մեթոդը փոխադրվեց մեզ մոտ ամերիկական դպրոցից: Այդ մեթոդը կայանում է նրանում, վոր դպրոցը, խումբը կամ բրիգադը վորոշ գործնական խնդիր են դնում իր առաջ: Այդ խնդիրը կատարելու համար մշակվում է պլան (նախագիծ): Այդ պլանում նշվում է՝

Խնչպիսի մասերից է բաղկացած ընդհանուր խնդիրը, վորի մասին պետք է իմանա աշակերտը նախորդ:

Խնչպիսի աշխատանք (աշխատանքային, հասարակական) է կատարելու աշակերտը առաջադրված խնդիրը լուծելու համար:

Ինչպիսի նոր գիտելիքներ պետք է ձեռք բերի աշակերտը այդ խնդիրը կատարելու ընթացքում:

Այդպիսի պլանով խումբը ձեռնարկում է աշխատանքի:

Առաջին հայացքից թվում է, թե այս մեթոդը շատ դրական է, բայց վոչ. նրա կիրառումը հապահովեց գիտելիքների յուրացումը և ընդհակառակը, պատճառ յեղավ գիտություններ ձեռք բերելու գործի թուլացման: Այս նախազգային մեթոդը դպրոցների մահացման հակալենինյան ուսմունքի հարադատ քույրն է և սխտեմատիկ ուսում ստանալու խոչնդոտներից մեկը:

Դպրոցի գլխավոր խնդիրը, սխտեմատիկ ուսում տալը, մոռացության մատնվեց:

Վտարելով դպրոցական աշխատանքի բոլոր մյուս մեթոդները, նախազգային մեթոդը հայտարարեցին ամենակարևորագույնը, առաջնորդողը: Առաջարկում էին համարյա թե դպրոցի բոլոր աշխատանքը վերակառուցել այդ մեթոդով: Պարզ է, վոր ուսումնական ծրագիրը անուշադրության էր մատնված: Վորոշակի, կայուն դասացուցակի փոխարեն մտցվում էր, այսպես ասած, «ազատ» դասացուցակ, վոր ամեն ոք կարող էր փոխել ամեն մեկը: Դիտության հիմքերի սխտեմատիկ խորը յուրացման փոխարեն գլխավոր ուշադրությունը ուղղված էր հասարակական և արտադրական աշխատանքի ուղղությամբ:

Այս բոլորը քայքայում, քանդում էր խորհրդային դպրոցը և վիժեցնում էր դպրոցի գլխավոր խնդրի, սխտեմատիկ ուսում տալու գործը:

16. ՅԵՄ ԹԵ ՎՈՉ ՅԵՄ

Թե վորքան շատերը սխալ են ըմբռնել դպրոցի հիմնական խնդիրները, ցույց է տալիս բոլորին քաջ հայտնի լոգոնգը՝ «դպրոցը—գործարանի ձեխն է»:

Առաջին հայացքից շատ լավ լոգոնգ է:

Բայց դա միայն առաջին հայացքից: Դիտեցե՛ք ավելի ուշադրությամբ, ավելի խորը մտածեցե՛ք, կտեսնե՛ք, վոր այդ լոգոնգը սխալ է: Ինչո՞ւն է այդ սխալը:

Ամեն մի գործարանային ցեխ գործարանի անբաժան մասն է կազմում, ամբողջովին յենթարկվում է նրան: Ցեխը գործարանից անջատ իր հատուկ խնդիրները չունի: Նա կատարում է նախ և առաջ աշխատանքի այն մասը, վորի համար նշանակված է նա և վորպիսին ցույց է տալիս նրան գործարանը:

Ցեխն ամեն ասենք, վոր դպրոցը գործարանի ցեխ է, դա կընշանակեր, վոր կցված դպրոցը պետք է յենթարկվի գործարանին, ծառայի նրա պետքերին և այդ պետքերից յեխնելով, կառուցի իր աշխատանքը: Արդյո՞ք այդ ճիշտ կլինի:

Վե՛հ, ճիշտ չի լինի: Խ. իշխանությունը դպրոցի վրա մեծ, պատասխանատու խնդիր է դնում, վորը բնավ չի կարելի յենթարկել առանձին գործարանի խնդիրներին: Դպրոցը սոցիալիստական շինարարության համար պետք է պատրաստի ապագա կադրեր:

— Լավ,— կասեն մի քանիսը,— բայց չե՞ վոր մեր սոցիալիստական շինարարությունը, հենց այդ գործարանները, ֆաբրիկները խորհրդատեսություններն ու կուտեստեսություններն են, վորոնց կցված են դպրոցները: Ախր բոլոր այդ ձեռնարկությունները կկանեն այն կադրերը, վորոնց ապագայում կտան դպրոցները: Ել ինչո՞ւ չենք կարող ասել՝ «դպրոցը գործարանի կադրերի ցեխն է»:

Բայց այդ դատողութիւնն ել սխալ եւ Ձեռնարկութեանը հարկավոր են վորոշ մասնագիտութեան տեր մարդիկ՝ փականագործներ, մեխանիկներ, խառատներ (токаря), զանազան ճյուղերի տեխնիկներ կամ ինժեներներ. վորպեսզի ձեռք բերվի այդ մասնագիտական պատրաստութիւնը, նախ պետք է գործաշրջանը, տեխնիկում կամ բարձրագույն դպրոց ավարտել:

Իսկ մեր առաջին և յերկրորդ աստիճանի դպրոցները աւակերտին չեն ցալիս վորոշ արհեստ կամ մասնագիտութիւն: Նա նախ և առաջ պետք է տա աշակերտին գիտութիւնների հիմքերի (ֆիզիկա, քիմիա, մաթեմատիկա, աշխարհագրութիւն, հասարակագիտութիւն, մայրենի լեզու և այլն), լավ յուրացում լինի ընդհանուր պոլիտեխնիկական պատրաստութիւն (ծանոթութիւն արտադրութեան ընդհանուր գիտական սկզբունքների հետ տեսականում և գործնականում):

Հենց այդ է, վոր վորպես հիմք պահանջվում է ամեն մի արհեստի և մասնագիտութեան համար:

Մեր դպրոցում ֆաբրիկների և գործարանների համար կադրերը խում մեկին չեն պատրաստվում, այլ սկզբում գործաշրջանների, տեխնիկումների, ԲՈՒՀ-երի*) ԲՏՈՒՀ-ների**) համար, իսկ այստեղից արդեն նրանք ուղարկվում են արտադրութիւն, Այժմ պարզ է, թե ինչու «դպրոցը» գործարանի կադրերի ցեխ» լոզունգը սխալ է:

— Դեռ ամենեւին ել պարզ չէ—կհայտարարի կրցված գործարանի վորեւէ կամակոր դիրեկտորը (վարիչը): Վոչ վոք չի ստիպում աշակերտին դպրոցը ավարտելուց հետո անմիջապէս կանգնել դադգյահի մօտ ու աշխատել ինչպէս բոլոր բանվորները: Թող առաջ սովորի գործաշրջանը: Բայց յետ կամենում եմ, վորպեսզի այդ աշա-

*) Բարձրագույն դպրոցներ:

**) Բարձր տեխնիկական դպրոցներ:

կերտը գնա վոչ թե իր ցանկացած գործաշրջանը կամ տեխնիկումը, այլ մեր գործաշրջանը, վորը արդեն հատուկ մեր գործարանի համար է կադրեր պատրաստում:

Ահա թե ինչպէս է մտածում դիրեկտորը: Բայց մենք կպատասխանենք նրան:

— Թանկագին ընկեր, ձեր ուզածը չի լինի, վոչ վոք չի կարող և իրավունք չունի նախորդ վորոշ մասնագիտութիւն փաթաթել աշակերտի վզին: Թող նա ինքը յուր հակումներով և հետաքրքրաշարժումներով ընտրի իրա համար մասնագիտութիւն և գնա հարկաւ ընտրի իրա համար մասնագիտութիւն և գնա հարկաւ մապատասխան գործաշրջանը, տեխնիկում կամ ԲՈՒՀ: Աշխատեցեք հետաքրքրել նրան ձեր գործաշրջանով, բայց բռնի կերպով ստիպել չի կարելի:

Մենք գործնականում մի շարք դեպքեր գիտենք, յերբ մի շարք տնտեսավարներ փորձեցին դպրոցն իրենց գործարանի համար կադրերի ցեխ «դարձնել»: Որինակ, շատ ընտրող է «Լիվերս» գործարանում (Մոսկվա) տեղի ունեցած դեպքը, վորտեղ վարչութիւնը հրաժարվել էր պոլիտեխնիկացիայի գծով դպրոցի հետ պայմանագիր կնքել, մինչև վոր պայմանագրի մեջ չմտցվի հետևյալ կետը. «Բոլոր յոթնամյա դպրոցավարտները պետք է մտնեն «Լիվերս» գործարանին կից գործաշրջանը»:

«Դպրոցը-գործարանի ցեխ» լոզունգը գործնականում այն հետևանքն ունի, վոր դպրոցը գլխավորապէս մտահոգված էր միայն գործարանային պլանի կատարման ոգնութեամբ: Միևնույն ժամանակ նա մոռանում էր, վոր նա յուր ուսումնական արդիւնաւանքն ունի (դպրոցակտն ծրագիր), վորի կատարման համար պետք է տարվի դպրոցի ամբողջ աշխատանքը:

Յեթե մենք հրաժարվում ենք «դպրոցը գործարանի ցեխ» լոզունգից, դա յերբեք չի նշանակում, թե

դպրոցը սերտորեն կապված չպետք է լինի գործարանի հետ: Ընդհակառակը, այդ կապը պետք է շարունակ լայնացնել յեկ ամբացնել: Բայց այդ կապը պետք է կազմակերպված լինի այնպես, վոր նա ոգնի դպրոցին կատարելու յուր առաջ դրված գլխավոր խնդիրը՝ պատրաստել զբազետ, բազմակողմանի զարգացած՝ սոցիալիզմ կառուցողներ:

ՅԵՐԿՈՒ ՄԱՐՏԱԿԱՆ ԽՆԴԻՐ

Սխալներ և խեղաթյուրումներ տեղի ունեցան նաև մանկական ինքնավարութեան հարցում: Այստեղ, ինչպես և դպրոցի ամբողջ աշխատանքում, ուշադրությունը կենտրոնացած էր հասարակական և արտադրական աշխատանքների վրա, և մի կողմ ելին թողել ուսուցման խնդիրները, գիտելիքների յուրացումը, դպրոցի կարգապահութեան խնդիրները: Կուսակցութեան կենտրոնական Կոմիտեյի վորոշումը դպրոցի մասին այդ հարցի վերաբերյալ լիակատար պարզություն է մտցնում.

«Մանկական իրավաստությունը...

«Մանկական ինստիտուտի ուղեւորները (կազմակերպությունների) աշխատանքը այնպես դնել, վորպեսզի նա ուղղված լինի գլխավորապես ուսման վորակի բարձրացման յեւ դպրոցում գիտակցական կարգաւարանութեան ամրացման գծով:

Սյգմայի բնակիչները և զինվորները չեն կարող այդ հարցում—թե ինչով պետք է զբաղվի ինքնավարութունը՝ շփոթ մտքներ:

Բայց նրանք շխափլալ են դարձրել փոչ միայն այն,
թե ինչ պետք է անի ինքնավարութիւնը, այլ և ինք-
նավարութեան և պիոնեռական կազմակերպութեան փոխ-
հարաբերութիւնների հարցը: Նրանք այն աստիճան,

եյին սայթաքել, Վոր յեթե դպրոցում 80-100% պիտե՛րնե՛ր են, ուրեմն պետք է վերացնել ինքնավարությունը, և դպրոցի ամբողջ աշխատանքը պետք է տանի պիտներ բազայի խորհուրդը:

Փորձը ցույց տվեց, Վոր այդ բոլոր դատողությունները խորապես սխալ են, վորովհետև իրականում պիտեանալան կազմակերպության վերացման են բերում, վորը ձուլվելով դպրոցի հետ, կորցնում է յուր սեփական դեմքը:

Շատ անգամ մոռացվում եր դպրոցականների տա-
րիքային առանձնահատկությունների մասին: Շատ աշա-
կերտներ չեյին ընդգրկված հասարակական աշխատանք-
ների մեջ, իսկ ով մասնակցում եր, ուներ 3-6 և շատ
անգամ ավելի ծանրաբեռնում: Ակտիվ աշակերտները
հաճախ որը անցկացնում էյին ժողովից ժողով գնալով
և վոչ ուսումնական աշխատանքներ կատարելով. Երանք
ուսումից յետ էյին մնում: Լուսժողկոմատն ու ժող-
առողջապահության կոմիտարիատը կուսակցության Կենտ-
կոմի սեպտեմբերյան վորոշման հիման վրա կարգադր-
ել են դպրոցական պարապմունքները և աշակերտների
ծանրաբեռնությունները սահմանավորել. այդ կարգադրու-
թյունը պետք է ամեն մի դպրոցում գործադրվի:

¶ 15sf b'

Ուղիղ սահմանավորել ուսումնական որը, կանոնավորել հասարակական աշխատանքը, կազմակերպել մանուկների կենցաղն ու հանգիստը:

18. ՊՐՈԺԵԿՏՈՐՆԵՐՆ ԱՍՈՒՄ ԵՅԻՆ...

Սյդ բոլոր սխաները, խեղաթյուրումները, քաղա-
պոլոթյունները, թեքումներն իբրեւումն են առ-

նում մի թեորիայից, վոր քարոզում էին ժողովրդական լուսավորության ասպարիզում աշխատող մի քանի պատասխանատու աշխատակիցներ:

Դա «դպրոցի մահացման» թեորիան է:

Ահա թե ինչ են ասում այդ թեորիայի քարոզիչները:

— Պետութիւնը—դա դասակարգային կազմակերպութիւն է: Ծավալուն սոցիալիզմի ժամանակ, յերբ դասակարգեր չեն լինի, չի լինի նաև պետութիւն: Նա կմեռնի: Հետո: Դպրոցը պետական ասպարատի մասն է: Ուրեմն, նա նույնպես կմեռնի: Սոցիալիզմի ժամանակ նա այլևս չի լինի:

— Լավ,—կասի ընթերցողը.—հապա ինչպէս պետք է դաստիարակվեն և սովորեն յերեխաները:

— Ո՛ր, մի անհանգստանաք,—պատասխանում են մարդարեւները: Նրանց դաստիարակելու և սովորեցնելու յե վողջ հասարակութիւնը: Յերբ ամբողջ հասարակութիւնը ապրելու յե պլանային և կազմակերպված կերպով՝ դա հասարակ բան է: Հասակավորները իրենց գիտելիքները հաղորդելու յեն յերեխաներին: Յերեխաները կգան վորևէ գործարան, նրանց ցույց կտան, թե ինչպես է նա կազմակերպված, ցույց կտան մեխանիզմները: Նրանք կաշխատեն մեծերի հետ միասին, կողք-կողքի: Կգնան գործարան—նրանց ոգտակար դրբեր կտան: Կգան թանգարան—նոր տեղեկութիւններ կըստանան: Ուր վոր գնա յերեխան, աւեն տեղ նրա վրա ներգործելու յե սոցիալիստական հասարակության կազմակերպված ազդեցութիւնը: Յեվ նա այդպես է մեծանալու և դաստիարակվելու:

— Սպասեք, իսկ ուսուցիչը:

— Ո՛ր, մասնագետ ուսուցիչներ այլևս չեն լինի: Բոլորը ուսուցիչներ՝ կդառնան: Ամեն մի հասակավոր,

վորը վորոշ գիտելիքներ և փորձառութիւն ունի, կըսովորեցնի և որինակ կդառնա փոքրերին:

Կան մարդիկ, վորոնց անվանում են պրոֆէսյորներ: Նրանք զանազան թեորիաներ և յերևակայական պլաններ են հնարում իրենց գլխից, հաշվի չառնելով շրջապատի իրականութիւնը և այն խնդիրները, վորոնց առաջ է բերում ինքը, կյանքը:

«Դպրոցի մահացման» թեորիան կսրված է կյանքից, և այդպիսի մարդկանց գլխին զոռ տալով մեծածառ բան է:

Այժմ մենք պայքարում ենք նրա համար, վորպեսզի ամրացնենք մեր դպրոցը, վորպեսզի նա իսկապէս պատրաստի գրագետ, կոմունիստական վոգով դաստիարակված կադրեր: Իսկ այստեղ յերևան են դալիս այդ պրոֆէկտորները և ասում են՝

— Ինչո՞ւ յեք այդքան զոռ տալիս: Ախր միևնույն է, դպրոցը պետք է մեռնի: Յեվ նա արդեն մեր թափած ջանքերի շնորհիվ սկսել է մահանալ: Դպրոցը արդեն գործարանի ցեխ է դառնում: Ուսումնական ծրագրի փոխարեն նախագծային մեթոդը պետք է գործադրել: Կայուն դասացուցակի փոխարեն—ազատ դասացուցակ: Փոխանակ ուշադրութիւնը դեպի ուսումը դարձնելու, ուշադրութիւնը պետք է կենտրոնացնել հասարակական աշխատանքին: Ամեն ինչ յուղի պես կը գնա:

— Այո, —պատասխանում ենք մենք դրանց,—դուք ձեր վնասակար, խառնաշփոթ թեորիաներով մոլորեցնում եք մանկավարժներին և իսկապէս քանդում դպրոցը և դասակարգային հրձկանք պատճառում թշնամուն: Բայց բավական է: Ձեր թեորիաները մերկացված, պարզված են:

Կուսակցութիւնը վնասկան հարված տվեց այդ պրոֆէսյորներին, նրանց բոլոր խեղաթուրումներին ու թեմումներին պոլիսթինիլագիայի պրակտիկայով:

Դրա հետ մեկտեղ կուսակցությունը հարվածեց ուսուցչության այն հետադիմական մասին, վորը նրգնում եր հետ սանել դպրոցը, դարձնել նրան բանավոր յեվ սխոլաստիկ*):

9. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՐԱՅԱՆԳԸ.

Կուսակցության կենտրոնական կոմիտեյի վորոշումը դպրոցի մասին պարզորոշ ցուցմունքներ ե տալիս, թե ինչպես պետք ե կառուցել պոլիտեխնիկական դպրոցը:

Կենտրոնական կոմիտեն մարտական խնդիրներ ե առաջադրել՝

Բարձրացնել գիտելիքների ծավալը յեվ յուրացման վորակը: Անմիջապես կազմակերպել ուսումնական ծրագրերի վերամշակումը, ապահովել գիտելիքների նեգրիս մշակված երջագիծ:

Միջոցներ ձեռն առնել, վորպեսզի ամեն սի ուսուցիչ իսկապես սիրապեսի դպրոցական աշխատանքի բոլոր սեթողներին: Պարտավորեցնել ասեն մի կոմունիստ-մանկավարժին ուսումնասիրել դպրոցական մեթոդիկան:

Դպրոցներում լայնորեն ծավալել արհեստանոցների յեվ աշխատանքային սենյակների ցանցը, զուգակցելով այդ պայմանագրերի հիման վրա դրոցների կցումով ձեռնարկություններին, խորհմեսետություններին, ՄՏկայաններին յեվ կոյսմեսետություններին:

Ստեղծել որինակելի դպրոցների ցանց, վորոնց վրա ուսուցչական մասնագետներ, բանվորներ, կոյսմեստա-

*) Տեսական նեղ, չոր ե կյանքից կորված հայացքներով կազմված (թարգմ.):

կանները յեվ աշակերտները կարողանային գործնականում սովորել պոլիտեխնիկական դպրոցի կառուցմանը:

Ապահովել խորհրդային դպրոցում տոկուն կոմունիստական դաստիարակությունը, հասուկ ուսադրություն դարձնելով հասարակական-հաղափական առարկաների պատմամեթոդական վրա:

Մշակել ընդհանուր պարտադիր յոթնամյա ուսման պլանը:

Կազմակերպել ամբողջ Միության մեջ փորձված հրահանգիչների ցանց, վորոնք պեժ ե ցույց տան մանկավարժին, թե ինչպես պեժ ե աշխատել ուղիղ:

Կազմակերպել ուսուցիչների ծանոթացումը արհադրության հիմունքների հետ: Բոլոր բարձրագույն դպրոցներում ծանոթացնել ուսանողների դպրոցի պոլիտեխնիկացիայի յեվ արհադրա-տեխնիկական ուսուցման դրույթի հետ:

Ժողովրդական յուսավորության դեկավարությունը նոր ձեվով կազմակերպել, առանձին ուսադրություն դարձնելով կարեվորագույն արդյունաբերական երջանների դպրոցների վրա (մեսադ, հարածուխ, նավթ), խորհմեսետությունների, ՄՏկայանների, համատարած կոլեկտիվացման յեվ նոր շինարարությունների երջաններում:

Այստեղ մենք նշեցինք ցուցմունքների միայն մի մասը, վորոնք տրված են կուսակցության կենտկոմի կողմից: Այդ ցուցմունքները լրիվ կերպով հիշված են կուսակցության կենտկոմի վորոշման մեջ տարրական ե միջնակարգ դպրոցների մասին:

Կուսակցության դեկավարությամբ մենք կստեղծենք իսկական պոլիտեխնիկական դպրոց:

20. ԳԵՊԻ ԳՈՐԾ, ԱՌԱՂ:

Ընկերս, Ուստինյան Մելքոնը, ծախեց լրագիրը:

— Ոհո:

— Հ'ը, Մելքոն. հավանեցիր, թե...

— Դե, գիտես, այդ վորոշումը և բոլոր այդ գործերը, խեղաթյուրումները... Իսկապես, յերբեմն մի ինչ վորբան կատարում ես, բայց թե ինչ, ինչու—չգիտես: Իսկ մեր դպրոցում շատ հավանական է, վոր նման խեղաթյուրումներ տեղի յեն ունեցած: Իսկ այժմ պարզ է, թե ինչը ինչի համար է:

— Բոլորովին պարզ է:

— Դե, չի կարելի ասել բոլորովին. ինչքան չլինի գործը բարդ է: Բայց թե ինչո՞ւն է կայանում եյուրթյունը—հասկացա:

— Բարի: Դու, կարծեմ, աշխույժ անդամ ես, այո: Պարզ է արդյոք քեզ համար, թե ի՞նչ պետք է անես դու:

— Ըհ'ը,—Մելքոնը ծիծաղեց: Կարող եմ ասել, միանգամայն պարզ է:

Առաջին՝ պայքարել ուսման, գիտելիքների համար, որպեսզի դա լինեի, ինչպես ընկեր Ստալինը ասել է աշխատանքի մասին, ամեն մի աշակերտի փառքի ու պատվի ործ: Պայքարել ուսումնական ծրագրի կատարման համար այնպես, ինչպես բանվորները ձեռնարկության արդֆինպլանի համար:

Յերկրորդ: Պայքարել դպրոցում ամուր գիտակցական կարգապահության համար: Վոչ թե վախով կամ վախեցնելով, այլ գիտակցական որինակով: Յեթե դու խորհրդային աշակերտ ես, հասկացիր՝ դպրոցը դա նույն արդյունաբերությունն է: Այստեղ էլ գործալիքը, ծուլը, վորոնք չեն յենթարկվում կարգապահության, փաստում

են սոցիալիստական շինարարության այնպես, ինչպես Դեկաբրիստների և Մազնիտոշների գործալիքն ու ծուլը:

Պետք է կարգավորել ուսումնական որը, հասարակական ծանրաբեռնումներն ու կազմակերպել մանուկի հանգիստը:

Յերրորդ: Դպրոցում և ձեռնարկության մեջ կուլտուրական և հասարակական աշխատանք կատարել: Բայց կազմակերպել այնպես, վորպեսզի նա ոգնի սովորելու, աճելու և իսկական սոցիալիզմի կառուցողներ պատրաստի:

— Ճիշտ ես ասում, Մելքոն: Բայց անհրաժեշտ է, վորպեսզի այդ բոլորը լուրջ խոսքեր չլինեն, այլ և գործ:

— Միշտ պատրաստ,—պատասխանեց Մելքոնը:



Ответственный редактор
М. М. Гигоян
Технический редактор
Г. М. Маркарян

№ 2267

4-45

Сд. в набор 10/III—1932 г.
Сд. в печать 3/IV—19 2 г.
Объем 1 1/2 печ. листа
Тираж 2000 экз

Уполкرایлита № 1279 1 аз.-кн. тип. СККПО. Статформат Б6 125X176. Заказ № 1373
Гор. Ростов на Дону.



ԳԻՆԸ 20 ԿՈՊ.
Цена 20 коп.

49.072



На армянском языке

БИБЛИОТЕЧКА ДЛЯ ШКОЛЬНИКА

ШНАЙДЕР

СТРОИМ ПОЛИТЕХНИЧЕСКУЮ

Из-во „СЕВЕРНЫЙ КАВКАЗ“

ԳՐԱԳՈՒԼՆԱԾԱՐԱՆ

ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ, ՄՈՍԿՈՎԱՍԿԱՅԱ ՓՈՂ., 53

ԳՐԱԿԱՆՈՐՈՆ (ԿՆԻԳՈՑԵՆՏՐ)